չէ օրէնք սահմանել և դրանով ենթադրել հողի խնդիրը կարգադրված։ Մեր սահմաններում կայ մի բուռն ժողովուրդ, որը խպառ զուրկ է հողից և որը ծանրանում է կառավարութեան վրա։ Ի՞նչ արաւ մեր կառավարութիւնը մի ափ հող, գլուխ դնելու մի տեղ, իր աշխատանքով ու քրտինքով ապրելու մի միջոց տրամադրելու այն ժողովրդին, որը այստեղ եկաւ և որը խոշոր դեր ունեցաւ վերջին յաջողութիւնների մէջ և որի կողքին, ըստ հռետոր բանախօսի, գոյութիւն ունեն «հողի ագնւականներ», որոնք մեր թիկունքից խփում են մեզ։ Հողային խնդիրը մեր երկրի կենսական խնդիրներից մէկն է — կասկած չկայ, բայց այդ կենսական խնդիրը չգործածենք միայն «նախընտրական պայքարի» իբր առարկայ, ինչպէս որ նկատում էր տեղական թերթերից մէկը անցեալ սեպտեմբեր ամսին։

Եւ յետոյ այս մեր պետականութիւնը հայ ոգով։ Ընդունում եմ, որ պէտք է նիւթական դիւրութիւններ տալ մեր պաշտօնեաներին ու բանակին, որպէսզի ի վիճակի լինեն աշխատելու. ընդունում եմ, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել կուեալու բոլոր նրանց դէմ, որոնք մեր հանրապետութիւնը վտանգում են, բայց պ. նախարարապետը ոչ մի անգամ անդրադարձաւ այն իրողութեան վրա — ռուսականութեան վրա, որը երէկի ժառանգութիւնն է, այսօր ապրում է և որի պատճառով, դժբախտաբար, ոչ մի անգամ պիտի կարողանայ հայ ոգին ու միտքը ապրել ու ապրեցնել մեր պետութիւնը, մեր ինքնուրոյնութիւնը։ Ի՞նչ արաւ կառավարութիւնը մեր բանակից վտարելու ռուս ոգին ու կարգերը։ Ի՞նչ արաւ նոյն կառավարութիւնը պաշտօնատներից վերջնականապէս վտարելու ռուս լեզուն և ռուսախօս պաշտօնեաներին։ Ինչո՞ւ մինչև հիմա մեր կառավարութիւնը հայերէնի չվերածեց մեր հեռագրի ու հեռախօսի, նամակների ու հասցէների լեզուն։

Եւ գիտէք ի՞նչ. եթէ սխալ տեղեկութիւն չեն տուել ինձ, ընդհակառակը, մեր կառավարութիւնը որոշել է տարրական դպրոցների մէջ վերականգնել ռուսաց լեզուի դասաւանդութիւնը. ինչո՞ւ — բնաւ հասկանալ չես կարող և ոչ մի անգամ կարող ես հաշուել։ Ո՞րն է դրդապատճառը այդ վերադարձին, ինձ համար յայտնի չէ, բայց այդ բաւական է ապացուցանելու այն ոգին, որը օտարինն է, որը ապրում է և վախենում եմ, որ ապրի և՛ վաղը։

Քանի կայ այդ մտայնութիւնը, քանի դեռ ապրում է ռուսը այս խորհրդարանում, մեր կառավարութեան և ժողովրդի մէջ, այնքան ժամանակ վտանգված է մեր հանրապետութիւնը։

Կարո՞ղ է մեզնից մէկը երաշխաւորել, որ յիշված պայմաններում ապրող մի ժողովուրդ, օտարի շնչով ու ոգով սնուած մի կառավարութիւն կարող է երկար գոյութիւն ունենալ։ Ես լուրջ կասկածներ ունեմ և, չպէտք է թաղցնել, ես վախենում եմ նոյնիսկ, որ շատերի սիրած ու երազած ռուսի ներկայութիւնը թուլացնի նոյն շատերի թևերը և նրանք վար դնեն իրենց զէնքերը, հիւսիսից եկածին թշնամի չհամարելով մեր հանրապետութեան ու մեր անկախութեան։ Այդ լուրջ ու վտանգաւոր կասկածը շրջան է առնում այսօր ոմանց մէջ, որովհետև իրողութիւնը գալիս է այդ ասելու...

Իսկ ի՞նչ արաւ կառավարութիւնը նախապատրաստուելու և կուելու հէնց այդ վտանգի դէմ, որը գալիս է հիւսիսից և որի ներկայութիւնն այսօր մոռացնել է տալիս հարաւի մեր դարաւոր թշնամուն։ Ցաւ է ասել, որ կառավարութեան հաղորդագրութիւնը դրական փաստեր չտուաւ այդ ուղղութեամբ։